ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

27.04.2023թ. թիվ 33-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝28.04.2023թ.-ից

«Արմսվիսբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ

Սահմանումներ

Բանկի հիմնական պայմաններ՝ Բանկի կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ, Բանկի կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռներեցներին) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ:

Վճարային քարտ (այսուհետ՝ Քարտ) ՝ArCa՞ լոկալ և ՝MasterCard՞ միջազգային վճարային համակարգերի պլաստիկ քարտեր, որոնք հանդիսանում են Բանկի սեփականությունը և տրամադրվում են հաճախորդներին, նրանց կողմից Բանկում բացված Քարտային հաշիվներով կանխիկ միջոցներ ստանալու և անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով:

Սակագներ՝ Բանկի կողմից սահմանված և հաստատված, Քարտերի տրամադրման և սպասարկման նպատակով հրապարակված սակագները, ներառյալ՝ Բանկի առանձին որոշմամբ սահմանված հատուկ, փոփոխված և/կամ արտոնյալ սակագները:

Քարտապան՝ Բանկի հետ կնքված պայմանագիրի հիման վրա Քարտն օգտագործելու իրավունք ունեցող ֆիզիկական անձ կամ նրա լիազորված ներկայացուցիչ:

Էրացուցիչ Քարտ՝ Քարտապանի կողմից լիազորված անձին օգտագործման համար տրամադրված Քարտ՝ համաձայն Քարտապանի գրավոր դիմումի: Էրացուցիչ քարտով գործառնությունները իրականացվում են Քարտապանի լիազորված անձի կողմից, Քարտապանի կողմից սահմանված սահմանաչափի սահմաններում, ընդ որում այդ գործառնությունների հետ կապված ամբողջ պատասխանատվությունը ստանձնում է Քարտապանը:

Քարտային հաշիվ (այսուհետ՝Հաշիվ)՝ Բանկում Քարտապանի անվամբ բացված բանկային հաշիվ, որում հաշվառվում են Վճարային Քարտերով և դրանց հետ կապված բոլոր գործառնությունները:

ArCa առցանց վճարային համակարգ՝ ArCa վճարահաշվարկային համակարգի կողմից տրամադրվող վիրտուալ քարտի ստեղծման, վարման և առցանց վճարումների համակարգ, որը հասանելի է www.arca.am ինտերնետային կայքի միջոցով:

Անհատական նույնականացման համար (PIN-կոդ)՝ Քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտային վճարահաշվարկային համակարգերի կանոններով նախատեսված դեպքերում քարտով գործարքներ կատարելիս

Գաղտնաբառ՝ Քարտապանի անձը նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտի և քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ArCa առցանց վճարային համակարգում վիրտուալ քարտ ստեղծելու համար, Բանկի կողմից սահմանված դեպքերում՝ քարտի սպասարկման հետ կապված հարցերով հեռախոսակապի միջոցով Բանկ դիմելու, ինչպես նաև Բանկի և ArCa վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված այլ դեպքերում:

Գործարքի հավաստագրում՝ քարտով գործարքի կատարման համար Բանկի կողմից տրվող թույլտվություն կամ հաստատում:

Գործարք՝ Քարտապանի կողմից Բանկին տրված հանձնարարական քարտի ուղղակի կամ անուղղակի օգտագործմամբ գործառնություն կատարելու վերաբերյալ:

Գործարքի հաշվառման օր՝ քարտը սպասարկող վճարահաշվարկային համակարգի կողմից գործարքը Բանկի հաշվառմանը ներկայացնելու կամ Քարտապանի հանձնարարականը կատարելու հիմքով՝ Բանկի կողմից քարտային հաշվով գործարքը հաշվառելու օր:

Գերածախս՝ Քարտապանին հասանելի դրամական միջոցներից ավել գումարի օգտագործում:

Վճարային սահմանաչափ՝ դրամական միջոցների չափ (Քարտային հաշվի մնացորդը և վարկային գծի (օվերդրաֆտի) հանրագումարը՝ բացառությամբ չնվազող մնացորդի), որի սահմաններում Քարտապանը կարող է ստանալ կանխիկ գումար և կատարել անկանխիկ վճարումներ:

Քաղվածք՝ Բանկի կողմից Քարտապանին տրամադրվող հաշվետվություն քարտային հաշվով (ներառյալ հիմնական և հավելյալ քարտերով) կատարված գործառնությունների վերաբերյալ:

CVV/CVC կոդ՝ քարտի դարձերեսին նշված և Քարտապանին նույնականացնող կոդ, որը կիրառվում է Քարտապանի կողմից ինտերնետ միջավայրում գործարքներ կատարելիս:

Stop-ցուցակ՝ միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից վարվող ցուցակ, որտեղ քարտապանի կամ Բանկի ցանկությամբ տեղադրվում են հափշտակված վճարային քարտերի համարները՝ դրանց միջոցով գործարքների իրականացումը կանխելու նպատակով:

Առևտրի/սպասարկման կետ՝ ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման կետ, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում, որի կողմից վաճառվող ապրանքների և (կամ) մատուցվող ծառայությունների դիմաց հնարավոր է վճարել քարտի միջոցով:

Ավտոմատ գանձման մեքենա (այսուհետ՝ բանկոմատ կամ ԱԳՄ)՝ գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ ինքնասպասարկող սարք:

POS տերմինալ՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է առևտրի/սպասարկման կետում անկանխիկ կամ բանկի տարածքում վճարային քարտով անկանխիկ և կանխիկացման գործառնություններ կատարելու համար:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն Կանոնները սահմանում են Քարտապանների Հաշվի բացման և վարման (սպասարկման) կարգն ու պայմանները, և կարգավորում են Հաշվի հետ կապված Կողմերի միջև ծագած հարաբերությունները:

1.2. Կանոնները բոլոր Քարտապանների համար համարվում է տիպային (ստանդարտ ձև) և սահմանում են Բանկի և Քարտապանի միջև կնքվող Պայմանագրի պայմանները:

1.3. Բանկը հաճախորդին տրամադրում է քարտ՝ Բանկի սահմանած ձևանմուշով հաճախորդի Բանկ ներկայացրած դիմումի հիման վրա, որով հաճախորդը հաստատում է Պայմանների ընդունումը (ակցեպտավորումը):

1.4. Վճարային քարտերի սպասարկման պայմանները գործում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, վճարահաշվարկային համակարգերի (ArCa և MasterCard) միջազգային պրակտիկայում օգտագործվող կանոնների, Բանկի հիմնական պայմանների, ինչպես նաև սույն Կանոնների:

1.5. Քարտով դրամական միջոցների, այդ թվում՝ վարկային միջոցների շարժը (մուտքագրումներ, ելքագրումներ), կանխիկ և անկանխիկ եղանակով օգտագործումը իրականացվում է համաձայն սույն Պայմանների և ArCa, MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված պայմանների և կանոնների:

1.6. Քարտով, ինչպես նաև առկայության դեպքում՝ լրացուցիչ քարտ(եր)ով կատարվող գործարքների համար միջոցների շրջանառությունն ապահովելու նպատակով Բանկը Քարտապանի համար բացում է քարտային հաշիվ:

1.7. Քարտային հաշիվը բացվում է Հիմնական քարտապանի անունով:

1.8. Քարտային հաշիվը բացվում է այն արժույթով, որը Քարտապանը նշել է դիմումում: Հաշիվը կարող է բացվել առավելագույնը չորս արժույթներով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար,ԵՎՐՈ և ՌԴ ռուբլի:

1.9. Քարտը վավեր է մինչև քարտի վրա նշված՝ քարտի գործողության ժամկետի համապատասխան ամսվա վերջին օրը ներառյալ: Գործողության ժամկետը լրանալուց հետո կամ Պայմանագրի լուծման դեպքում Քարտն արգելափակվում է և համակարգի սպասարկման կետերի կողմից ընդունման ենթակա չէ:

1.10. Քարտի գործողության ժամկետը լրանալիս Քարտապանը տվյալ ամսվա ընթացքում Բանկ է ներկայացնում Քարտը վերաթողարկելու գրավոր դիմում:

1.11. PIN-կոդը մոռանալու դեպքում քարտը ենթակա է վերաթողարկման Քարտապանի գրավոր տեղեկացման հիման վրա՝ համաձայն Բանկի սակագների:

1.12. Քարտը Բանկի սեփականությունն է և Բանկի պահանջով պետք է վերադարձվի Բանկ:

1.13. Սույն Պայմաններում սահմանված կանոնների և պահանջների խախտումով՝ քարտով կատարված գործարքների, ինչպես նաև քարտի, PIN-կոդի, գաղտնաբառի, քարտի վրա նշված տեղեկատվության (քարտի համար, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ) օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

2. Քարտի տրամադրում

2.1. Քարտի PIN և առանց PIN կոդի տրամադրման գործընթացը կազմակերպվում է քարտի պատվիրման դիմումը Քարտապանի կողմից Բանկ ներկայացնելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Առաքման եղանակով քարտը և PIN-կոդը տրամադրելու դեպքում առաքման ժամկետը սահմանվում է առաքման ծառայություններ մատուցող ընկերությունների պայմաններով:

2.2. Քարտը և PIN-կոդը Քարտապանին տրամադրվում են փակ ծրարով:

2.3. Քարտը և PIN-կոդը ստանալուն պես Քարտապանը պետք է ստուգի ծրարի փակ և անվնաս լինելը, քարտի և PIN-կոդի առկայությունը ծրարում, ինչպես նաև քարտի վրա նշված տվյալների ճշտությունը: Անհամապատասխանությունների դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:

2.4. Առանց PIN-կոդի քարտի ակտիվացումը կատարվում է քարտապանի կողմից ԱԳՄ-ի միջոցով՝ SMS հաղորդագրությամբ ստացված համապատասխան կոդի մուտքագրմամբ՝ ինքնուրույն սահմանելով ՊԻՆ կոդը:

2.5. Առաքման եղանակով քարտը և PIN-կոդը Քարտապանին ուղարկվում են առանձին ՝առաքման ծառայություններ մատուցող տարբեր ընկերությունների կամ առաքիչների միջոցով:

2.6. Քարտի և PIN-կոդի առաքման համար Բանկը սահմանում է ծախսերի փոխհատուցման պայմաններ համաձայն Բանկի սակագների:

2.7. Եթե Քարտապանի տրամադրած փոստային հասցեով առաքման արդյունքում քարտը և (կամ) PIN-կոդը հնարավոր չի եղել տրամադրել Քարտապանին, դրանք վերադարձվում են Բանկ և ցպահանջ պահվում են Բանկի տարածքում:

2.8. Քարտը և PIN-կոդը առաքման եղանակով ստանալուց հետո քարտն ակտիվացնելու համար Քարտապանը պետք է զանգահարի Բանկ: Քարտն ակտիվացվում է Քարտապանի և Բանկի միջև կապ հաստատվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի կողմից Քարտապանին պատշաճ նույնականացման պարագայում: Բանկն իրավունք ունի փակել քարտը, եթե այն չի ակտիվացվել առաքումից հետո 2 (երկու) ամսվա ընթացքում:

2.9. Բանկի տարածքում քարտը Քարտապանին տրամադրելուց հետո Քարտն ակտիվացվում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

3. Լրացուցիչ քարտի տրամադրում

3.1. Քարտապանը (Հիմնական քարտապան) կարող է իր քարտին (հիմնական քարտ) կից Բանկից ստանալ լրացուցիչ քարտ(եր) ինչպես իր համար, այնպես էլ երրորդ անձի համար: Լրացուցիչ քարտերի նկատմամբ ևս տարածվում են Կանոնները և Սակագները:

3.2. Լրացուցիչ քարտը կարող է տարբեր լինել հիմնական քարտի տեսակից, սակայն պետք է քարտի դասով լինի հիմնական քարտին հավասար կամ ավելի ցածր դասի:

3.3. Լրացուցիչ քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական քարտի քարտային հաշվում:

3.4. Վարկային քարտին կից տրամադրվում է բացառապես վարկային լրացուցիչ քարտ:

3.5. Հիմնական քարտապանը յուրաքանչյուր լրացուցիչ քարտի համար կարող է սահմանել առանձին ամսական վճարային սահմանաչափ:

3.6. Հիմնական քարտով և լրացուցիչ քարտ(եր)ով կատարված գործարքների հանրագումարը չպետք է գերազանցի հիմնական քարտի համար սահմանված վճարային սահմանաչափը:

3.7. Հիմնական և լրացուցիչ քարտերով իրականացված բոլոր գործարքների արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները հանդիսանում են Հիմնական քարտապանի պարտավորությունները:

3.8. Քարտապանն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել կան ժամանակավոր կասեցնել (բլոկավորել) Լրացուցիչ քարտը՝ ներկայացնելով գրավոր դիմում:

3.9. Լրացուցիչ քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) տեղեկացնել Բանկին Հիմնական քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկության դեպքերում և չօգտագործել քարտը նման տեղեկատվություն ունենալու դեպքում:

4. <u>Քարտի օգտագործման և անվտանգության կանոններ</u>

4.1. Քարտը ստանալուն պես Քարտապանը պարտավոր է անմիջապես ստորագրել քարտի հակառակ կողմի վրա ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտում: Քարտի հակառակ կողմում ստորագրության բացակայությունը կամ դրա անհամապատասխանությունը օրինական հիմք է քարտի սպասարկումը մերժելու և քարտն առգրավելու համար:

4.2. Քարտը կարող է օգտագործվել բանկոմատներում, կանխիկացման և առևտրի/սպասարկման կետերում և այն սարքավորումների միջոցով, որոնց էկրանին կամ հարակից տարածքի մակերեսին առկա է քարտերի սպասարկման վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

- քարտով հնարավոր գործարքների վերաբերյալ, օրինակ՝ կանխիկի տրամադրում, կանխիկի մուտքագրում, կոմունալ վճարումներ և այլն,
- քարտի վրա առկա նշումներին համապատասխան տվյալ քարտը սպասարկող վճարահաշվարկային համակարգերով (ArCa և MasterCard) սպասարկելու հնարավորության վերաբերյալ

4.3. Քարտի, PIN-կոդի և գաղտնաբառի օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Քարտապանը:

4.4. Քարտապանն իրավունք չունի փոխանցել քարտը, հայտնել PIN-կոդը, գաղտնաբառը այլ անձանց: Քարտապանը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի քարտը, PIN-կոդը, գաղտնաբառը, քարտի վրա նշված տեղեկատվությունը տեսանելի կամ այլ կերպ հասանելի չլինեն այլ անձանց:

4.5. Քարտապանը պետք է առավել ուշադիր լինի այն գործարքների մասով, որոնք իրականացվում են ժամանցի և նմանատիպ այլ վայրերում: Խորհուրդ է տրվում քարտը չվստահել այլ անձանց և թույլ չտալ քարտի օգտագործումը Քարտապանի տեսադաշտից դուրս:

4.6. Չի կարելի օգտվել այն բանկոմատներից, կանխիկացման և առևտրի/սպասարման կետերից և սարքավորումներից, որոնք հաճախորդի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև եթե դրանց քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կպչուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:

4.7. Ինտերնետ միջավայրում քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում նախատեսող կայքերին (secure-payment website): Առցանց խաղատները, բուքմեյքերական գրասենյակները համարվում են առավել ռիսկային:

4.8. Արգելվում է գրել PIN-կոդը քարտի վրա, ինչպես նաև քարտը և PIN-կոդը պահել միասին:

4.9. Քարտով գործարքների իրականացման ժամանակ Քարտապանը պետք է մուտքագրի PIN-կոդը, եթե գործարքի կատարման համար օգտագործվող սարքավորման միջոցով տվյալ տեսակի քարտով գործարքի իրականացման համար պահանջվում է PIN-կոդի մուտքագրում: Ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) քարտով գործարքների իրականացման ժամանակ PIN-կոդի մուտքագրում չի պահանջվում: Անհպում քարտերով գործարքների օրական առավելագույնը սահմանաչափը և քանակը սահմանվում է Սակագներով:

4.10. Արգելվում է ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) մուտքագրել (հայտնել) PIN-կոդը: PIN-կոդը հայտնելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:

4.11. Քարտը օգտագործելիս PIN-կոդը անհրաժեշտ է հավաքել այնպես, որ տեսանելի չլինի այլ անձանց համար և չտեսագրվի որևէ տեսաձայնագրող սարքի միջոցով:

4.12. Գործարք կատարելիս PIN-կոդը հաջորդաբար 3 (երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում քարտը բլոկավորվում է և առգրավում է:

4.13. Քարտը կարող է առգրավվել նաև բանկոմատից դուրս գալուց հետո 20 (քսան) վայրկյանի ընթացքում քարտը չվերցնելու դեպքում, ինչպես նաև բանկոմատի տեխնիկական խնդիրների և քարտը վնասված լինելու պատճառով:

4.14. Եթե բանկոմատի միջոցով քարտով գործարք կատարելիս քարտը բանկոմատում առգրավվել է, և քարտի առգրավման պատճառի մասին որևէ հաղորդագրություն չի արտացոլվում էկրանին կամ անդորրագրի վրա, Քարտապանը պետք է անմիջապես զանգահարի Բանկ և համոզվի, որ քարտը բլոկավորվել է: Եթե քարտը չի բլոկավորվել, անհրաժեշտ է անհապաղ բլոկավորել այն:

4.15. Բանկոմատում առգրավված քարտը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Բանկ: Առգրավված քարտը վերադարձվում է Քարտապանին քարտի առգրավման օրվանից հաշված հետևյալ ժամկետներում՝

- Եթե բանկոմատը գտնվում է Բանկի գլխամասային գրասենյակի տարածքում՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում,
- Եթե քարտը առգրավվել է ՀՀ այլ բանկերի բանկոմատներում, քարտը տրամադրվում է Քարտապանին Բանկի կողմից այն ստանալու օրը:

4.16. Բլոկավորված քարտը Բանկի կողմից ապաբլոկավորվում է Քարտապանի գրավոր դիմումի հիման վրա այն ստանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում:

4.17. Քարտի բլոկավորման դեպքում չի դադարում քարտի հետ կապված միջնորդավճարների հաշվարկը և գանձումը:

4.18. Բանկը պատասխանատվություն չի կրում բանկոմատի, կանխիկացման, առևտրի/սպասարկման կետի կամ սարքավորման կողմից քարտի սպասարկումը մերժելու կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար:

4.19. Քարտի ապօրինի օգտագործման կամ ապօրինի օգտագործման վտանգի մասին տեղեկություններ, կասկած ունենալու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:

4.20. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում քարտի կիրառմամբ գործարքների կատարումը:

4.21. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել քարտի միջոցով տրամադրվող ծառայությունները, եթե հիմնավոր կասկածներ ունի քարտով կատարված գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ: Ծառայությունների կասեցումը Բանկի կողմից վերացվում է գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը կամ բավարար պարզաբանումներ ստանալուց հետո:

5. <u>Գործարքներ</u>

5.1. Քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործարքները.

- կանխիկի մուտքագրում՝ քարտով կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող սարքավորման միջոցով, ինչպես նաև Բանկում,
- կանխիկի ելքագրում՝ քարտով կանխիկի ելքի հնարավորություն ունեցող բանկոմատի, POS տերմինալի միջոցով,
- փոխանցում՝ բանկոմատի միջոցով և ArCa առցանց վճարային համակարգի միջոցով,
- անկանխիկ եղանակով վճարում ապրանքների և ծառայությունների դիմաց՝ առևտրի/սպասարկման կետերում՝ ներառյալ ինտերնետ միջավայրում:

5.2. Քարտից քարտ փոխանցումը (բանկոմատի կամ ArCa առցանց վճարային համակարգի միջոցով) քարտին հասանելի է դառնում որպես կանոն մինչև 5 (հինգ) րոպեի ընթացքում (ArCa պրոցեսինգային կենտրոնում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):

5.3. Բանկի դրամարկղում քարտին կանխիկ մուտքագրված գումարը, ինչպես նաև Բանկի հաշվից քարտին փոխանցումը քարտի վրա և այլ բանկերից փոխանցումները քարտին հասանելի են դառնում որպես կանոն հետևյալ ժամկետներում ընթացքում (ArCa պրոցեսինգային կենտրոնում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում)՝

- մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 12:00, եթե ստացվել է Բանկում նախորդ աշխատանքային օրվա 17:30-ից հետո,
- մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 14:00, եթե ստացվել է Բանկում մինչև նույն աշխատանքային օրվա 12:30,
- մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 17:00, եթե ստացվել է Բանկում մինչև նույն աշխատանքային օրվա 16:00,
- մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 18:30, եթե ստացվել է Բանկում մինչև նույն աշխատանքային օրվա 17:30:

5.4. Գործարքի գումարը քարտից ելքագրվում է անմիջապես, իսկ քարտային հաշվում հաշվառվում է որպես կանոն հետևյալ ժամկետներում՝

- ArCa համակարգում կատարված գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը,
- ArCa համակարգից դուրս կատարված գործարքների դեպքում 2-3 աշխատանքային օր հետո:

5.5. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի քարտին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու համար: Մասնավորապես՝ տեխնիկական խնդիրների պատճառով, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը գործարքների գումարները կարող են քարտին հասանելի դառնալ սահմանված ժամկետներից ավելի ուշ:

5.6. Քարտով կանխիկի ստացման օրական գործարքների առավելագույն գումարը և քանակը սահմանվում են Բանկի սակագներով: Սահմանված սահմանաչափը գերազանցող չափով գումարի կանխիկացման համար անհրաժեշտ է Բանկ ներկայացնել համապատասխան դիմում կամ իրականացնել Բանկի կողմից սահմանված սահմանաչափերի շրջանակներում ինքնուրույն՝ հեռահար համակարգի միջոցով:

5.7. ՀՀ բանկերի բանկոմատների միջոցով կանխիկի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել Սակագներով սահմանված սահմանաչափը:

5.8. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել քարտով գործարքների իրականացումը (քարտի բլոկավորում) հետևյալ դեպքերում՝

- եթե Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ քարտով կատարված գործարք(ներ)ի հավաստիության կամ հնարավոր զեղծարարության վերաբերյալ,
- եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ,
- Բանկի հիմնական պայմաններով սահմանված այլ դեպքերում:

5.9. Ցանկացած գործարք, որը ճանաչվում է Քարտապանի քարտի միջոցով կատարված գործարք, հանդիսանում է Քարտապանի պարտավորությունը:

5.10. Քարտով կատարված գործարքը և այն չեղարկելու արդյունքում գումարի վերադարձման գործարքը տարբեր գործարքներ են, որոնք արտացոլվում են քաղվածքում:

5.11. Քարտով կատարված գործարքները հաստատող փաստաթղթերի՝ Բանկում առկա պատճենները Քարտապանը կարող է ստանալ Բանկից՝ Բանկի սակագների համաձայն:

6. Քարտի կորուստ, գողություն, զեղծարարություն

6.1. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին (աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին +374 60 757000) հեռախոսահամարով կամ ArCa պրոցեսինգային կենտրոնին (շուրջօրյա +374 10 592222) հեռախոսահամարով կամ եթե հանդիսանում է հեռահար համակարգերի օգտագործող, կարող է հեռահար համակարգերի միջոցով ինքնուրույն կասեցնել/ապակասեցնել (բլոկավորել/ապաբլոկավորել) քարտը/քարտերը:

6.2. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին ստացված տեղեկատվության հիման վրա Բանկը բլոկավորում է քարտը:

6.3. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո Քարտապանը պարտավոր է ողջամիտ ժամկետում այդ մասին նաև գրավոր տեղեկացնել Բանկին: Պատշաճ տեղեկացման պահ է համարվում գրավոր տեղեկացումը:

6.4. Մինչև քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

6.5. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո քարտով իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում՝ համաձայն Բանկի սակագների:

6.6. Քարտապանը պարտավոր է հատուցել քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին չտեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելը երրորդ անձանց կողմից քարտի օգտագործման հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները:

6.7. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի քարտի ապաբլոկավորման դիմում: Այս դեպքում քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

7. Քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS կարճ հաղորդագրությունների միջոցով քարտապաններին տեղեկացման կարգը և պայմանները

7.1. Քարտապանը կարող է ակտիվացնել SMS կարճ հաղորդագրությունների ծառայությունը կամ հրաժարվել SMS կարճ հաղորդագրությունների ծառայության ակտիվացումից՝ այդ մասին կատարելով նշում դիմումի համապատասխան դաշտում:

7.2. SMS կարճ հաղորդագրությունների ծառայությունը թույլ է տալիս քարտապանին նշել որևէ գումար և այդ գումարին հավասար կամ դրանից բարձր գումարի ցանկացած հավաստագրման դեպքում ստանալ SMS հաղորդագրություն: Ծառայությունը հատկապես կարևոր է վճարային քարտի զեղծարար օգտագործումը կանխելու համար:

7.3. Ծառայության ակտիվացման պահից Քարտապանը ծանուցվում է գործարքների վերաբերյալ՝ դիմումում նշված բջջային հեռախոսահամարին SMS կարճ հաղորդագրությունների ծառայության միջոցով:

7.4. Քարտային հաշվի մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS ծառայությունն ակտիվածված լինելու դեպքում Քարտապանի տրամադրած հեռախոսահամարին ուղարկված SMS-ները Քարտապանին Բանկից անկախ հանգամանքներով չհասնելու և չհասնելու հետևանքով Քարտապանի կրած վնասների կամ ունեցած կորուստների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

7.5. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի բջջային հեռախոսի կամ բջջային կապի խափանման, հեռահաղորդակցման ծառայություններ մատուցող կազմակերպության մոտ ծագած տեխնիկական կամ այլ խնդիրներ առաջանալու հետևանքով, Քարտապանի բջջային հեռախոսահամարի փոփոխության (որի մասին պատշաճ չի տեղեկացվել Բանկին), կամ Քարտապանի ռոումինգում գտնվելու ժամանակ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկված SMS –ները չստանալու համար: Քարտապանի հեռախոսը երրորդ անձանց հասանելի դառնալու պարագայում դրանում պահվող տվյալները կամ հեռախոսի միջոցով ձեռքբերվող տեղեկատվությունը բացահայտվելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

7.6. SMS տեղեկացման ծառայության համար Բանկը գանձում է միջնորդավճարներ՝ Բանկի սակագների համաձայն

8. USSD ծառայության և 3D Secure Code անվտանգության համակարգի կարգը և պայմանները

8.1. Քարտապանը կարող է ակտիվացնել USSD ծառայությունը դիմումի հիման վրա:

8.2. USSD ծառայությունյան միջոցով հաճախորդը ցանկացած պահին բջջային հեռախոսի միջոցով կարող է ստուգել իր քարտերի մնացորդները, ստանալ քաղվածք կամ անհրաժեշտության դեպքում բլոկավորել քարտը:

8.3. Քարտապանը կարող է ակտիվացնել 3D Secure Code անվտանգության համակարգը կամ հրաժարվել ակտիվացումից՝ այդ մասին կատարելով նշում դիմումի համապատասխան դաշտում:

8.4. Ինտերնետ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով 3D Secure Code նշում ունեցող կայքերում գործարքներ կատարելու համար Քարտապանը պետք է մուտքագրի Բանկիկողմից տրամադրվող մեկանգամյա գաղտնաբառը, որը Քարտապանը յուրաքանչյուր անգամ գործարք կատարելիս ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության միջոցով: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով SMS հաղորդագրություն չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

9. Բողոքարկման գործընթաց

9.1. Քարտով իրականացված գործարքների վերաբերյալ առարկություններ կամ անհամաձայնություն ունենալու դեպքում Քարտապանը կարող է Բանկի կողմից սահմանված ձևով Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ ոչ ուշ, քան քաղվածքի ստացման ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում: Հայտի հետ անհրաժեշտ է ներկայացնել բողոքարկվող գործարքի հետ կապված փաստաթղթերը և Բանկի պահանջով՝ այլ տեղեկություններ կամ փաստաթղթեր:

9.2. Առևտրի/սպասարկման կետում կատարված գործարքի չեղարկումից հետո Քարտապանը կարող է Բանկներկայացնել բողոքարկման հայտ, եթե չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմիցչի վերադարձվել տվյալ առևտրի/սպասարկման կետի կողմից սահմանված ժամկետում կամ հետևյալ ժամկետում՝

- ՀՀ տարածքում կատարված գործարքների համար՝ չեղարկման օրվանից 10 օր,
- ՀՀ տարածքից դուրս կատարված գործարքների համար՝ 30 օր:

9.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է հնարավորության սահմաններում օժանդակել Քարտապանի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

9.4. Առևտրի/սպասարկման կետում իրականացված գործարքի բողոքարկումը չի հանդիսանում Բանկի նկատմամբբողոքի կամ բողոք-պահանջի ներկայացում, և Բանկի դերակատարումը սահմանափակվում էհամապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:

9.5. Բողոքարկման հայտի պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է հետևյալ ժամկետներում.

- ArCa վճարահաշվարկային համակարգում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 40 (քառասուն) օրվա ընթացքում,
- միջազգային վճարահաշվարկային համակարգերում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում,
- Բանկի բանկոմատներով կատարված կանխիկ գումարի մուտքագրման կամ ելքագրման գործարքների բողոքարկման դեպքում (եթե բանկոմատը չի տրամադրել կանխիկ գումարը, սակայն այն նվազեցվել է քարտային հաշվից, կամ Քարտապանը մուտքագրել է կանխիկ գումար, սակայն քարտային մնացորդը չի ավելացել) հայտի ստացման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

10. Արժույթի փոխարկում

10.1. Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես քարտային հաշվի արժույթով, այնպես էլ քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով:

10.2. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքների հաշվառման համար գործարքի գումարը փոխարկվում է քարտային հաշվի արժույթի:

10.3. Արտարժույթային քարտերի դեպքում գումարի սառեցմումը իրականացվում է գործարքի կատարման պահին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով՝ գումարած ԱրՔա կողմից սահմանված տոկոսադրույքը , իսկ գործարքի հաշվառման օրը հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

10.4. Այն դեպքում երբ MasterCard վճարահաշվարկային համակարգի միջոցով կատարված գործարքի արժույթը տարբերվում է ԱՄՆ դոլարից, ապա կատարված գործարքը փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ MasterCard վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով, այնուհետև գումարը փոխարկվում է քարտի արժույթի՝ գործարքի հաշվառման օրը հաշվառմանը նախորդող բանկային օրվա համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

10.5. Գործարքի գումարը քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

11. Վճարներ և գանձումներ

11.1. Քարտապանը վճարում է Բանկին քարտի սպասարկման հետ կապված Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարներ, եթե Բանկի և Քարտապանի միջև այլ համաձայնություն չի կայացվել:

11.2. Քարտի սպասարկման միջնորդավճարի առաջին վճարումը Քարտապանը կատարում է քարտը պատվիրելիս իսկ հաջորդ վճարումները՝ Բանկի սակագներով սահմանված պարբերականությամբ՝ կանխավճարային կարգով:

11.3. Քարտով գործարքների իրականացման արդյունքում քարտի վճարային սահմանաչափը գերազանցելու դեպքում քարտային հաշվին ձևավորվում է գերածախս: Բանկի սակագներով սահմանված դեպքում և չափով Բանկ Քարտապանից գանձում է վճարային սահմանաչափը գերազանցելու տուժանք:

11.4. Բանկի սակագներով քարտի համար սահմանված միջնորդավճարները և քարտի սպասարկման հետ կապվածայլ վճարները՝ ներառյալ քարտային հաշվին ձևավորված գերածախսը և տուժանքը, պարտավորությունները կազմող գումարները Բանկի կողմից գանձվում են անակցեպտ եղանակով՝ առանց Քարտապանի հանձնարարականի: Գանձումն առաջնահերթ կատարվում է քարտային հաշվից, իսկ քարտային հաշվինմիջոցների բացակայության դեպքում՝ Քարտապանի՝ Բանկում ունեցած այլ հաշիվներից: Ընդ որումՔարտապանը պարտավոր է ապահովել համապատասխան դրամական միջոցների առկայությունը իր բանկային հաշիվ(ներ)ին:

11.5. Չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից վերադարձվելուց հետո Բանկըմուտքագրում է քարտային հաշվին՝ նվազեցնելով չեղարկման համար պահումները (առկայության դեպքում):Անկախ չեղարկված գործարքի գումարի վերադարձման հանգամանքից և ժամկետից՝ Քարտապանը պետք է Բանկին վճարի կատարված գործարքի արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

11.6. Բանկը պատասխանատվություն չի կրում առևտրի/սպասարկման կետի կողմից մատուցված որևէ ծառայության դիմաց գանձված և Քարտապանի քարտային հաշվից ելքագրված վճարի համար:

12. Քաղվածքներ

12.1. Բանկը ՀՀ օրենսդրությամբ և/կամ Քարտապանի հետ համաձայնեցված եղանակով Քարտապանին տրամադրում է քաղվածք մինչև հաշվետու ժամանակահատվածին հաջորդող ամսվա 15-ը: Քաղվածք կարող է չտրամադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

13. Քարտի փակում

13.1. Վճարային քարտի փակումն իրականացվում է քարտապանի գրավոր դիմումի համաձայն, կամ վճարային քարտի ժամկետի ավարտի դեպքում:

13.2. Բանկը վճարային քարտի փակման դիմումը ստանալուց հետո ստուգում է քարտային հաշվի նկատմամբ արգելանքների կամ քարտային հաշվի փակումը սահմանափակող այլ գործոնների առկայությունը և վերջիններիս բացակայության դեպքում 2 աշխատանքային օրվա ընթացքում փակում է վճարային քարտը և քարտային հաշիվը:

13.3. Քարտի փակման դեպքում Քարտապանը պետք է քարտը վերադարձնի Բանկ: Քարտապանի կողմից քարտը չվերադարձնելու դեպքում քարտի փակման դիմումում Քարպատանը պարտավոր է իր ստորագրությամբ այդ մասին նշում կատարել: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտը չվերադարձնելու հետևանքով քարտով իրականացված գործարքների համար:

13.4. Քարտի և (կամ) քարտային փաթեթի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում:

13.5. Քարտը փակելիս այդ քարտի բոլոր հավելյալ քարտերը ևս փակվում են:

13.6. Եթե քարտապանը մեկ ամսվա ընթացքում չի մոտենում Բանկ քարտային հաշվին առկա գումարը ստանալու համար, ապա այդ գումարը փոխանցվում է քարտապանի՝ Բանկում գործող այլ հաշվին, իսկ եթե չունի գործող այլ հաշիվ, ապա փոխանցվում է Բանկում փակված հաշիվների հաշվառման նպատակով բացված հատուկ տարանցիկ հաշվին, որտեղից քարտապանը ցանկացած պահի կարող է այն կանխիկացնել: